

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 41/7

20 դեկտեմբերի 2016թ.

Քննարկվեց Ա/Ձ Սերգեյ Կարապետյանի դիմումը սխալմամբ ՀԴՄ մուտքագրված գումարն իրացման շրջանառությունից նվազեցնելու վերաբերյալ:

Ա/Ձ Սերգեյ Կարապետյանի դիմումում բերված փաստարկները.

Ա/Ձ Սերգեյ Կարապետյանը հայտնում է, որ զբաղվում է մանրածախ առևտրով, իրավաբանական հասցեն է Շիրակացի 61 թաղամաս, 9 շենք, բնակարան 10: Գործունեությունն իրականացնում է Խաղաղության օղակ 5-րդ շենքի հարևանությամբ, որը 4 մ² մակերեսով կրպակ է:

Ա/Ձ Սերգեյ Կարապետյանը հայտնում է նաև, որ յուրաքանչյուր ամսվա շրջանառությունը կազմում է 170.000-180.000 դրամ:

09.08.2016թ. ՀԴՄ-ի մարումը կատարելու պահին Ա/Ձ Սերգեյ Կարապետյանը պատահաբար նկատել է, որ վաճառքը կազմել է 5.504.130 դրամ, ինչը մեկ օրվա ընթացքում հնարավոր չէ:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Սերգեյ Կարապետյանը խնդրում է վերագրյալ գումարը համարել անվավեր և չընդգրկել իրացման շրջանառության կազմում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Սերգեյ Կարապետյանը 09.08.2016թ. սխալմամբ հսկիչ-դրամարկղային մեքենա է մուտքագրել 5.504.130 դրամ, ինչի մասին տեղեկացել է օրվա վերջում՝ օրվա հերթափոխային հաշվետվությունը հանելու ժամանակ: Սակայն, քանի որ չի պահպանվել նշված գումարի կտրոնը, ուստի Ա/Ձ Սերգեյ Կարապետյանը չի կարողացել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով և ժամկետում լուծել առաջացած խնդիրը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն. «Դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման դեպքում, եթե սխալը հայտնաբերվել է գնման կտրոնի փակումից հետո մինչև օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումը, ապա սխալ գրանցումից անմիջապես հետո սխալ գումարով տպված կտրոնի հիման վրա լրացվում է գումարների՝ սխալմամբ գրանցման ակտը՝ համաձայն N 6 ձևի, և ՀԴՄ-ի միջոցով կատարվում է վերադարձ՝ տպվելով վերադարձի կտրոն: Այն դեպքում, երբ սխալը հայտնաբերվել է օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է սխալմամբ գրանցված գումարների ակտը. տվյալ դեպքում վերադարձի կտրոն չի տպվում.

...

7) կազմակերպությունները, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ՝ յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանք՝ համաձայն N 7 ձևի.»:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Սերգեյ Կարապետյանը չի կարողացել օգտվել ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններով նախատեսված ընթացակարգի դրույթներից, քանի որ չի պահպանվել վերոգրյալ գումարի չափով կտրոնը:

Միննույն ժամանակ, Ա/Ձ Սերգեյ Կարապետյանի կողմից 5.504.130 դրամ գումարը սխալմամբ մուտքագրված լինելու մասին է վկայում այն հանգամանքը, որ նա գործունեություն է իրականացնում 4 մ² մակերեսով կրպակի միջոցով և միջին ամսեկան շրջանառությունը չի գերազանցում 180.000 դրամը:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Ա/Ձ Սերգեյ Կարապետյանի կողմից 5.504.130 դրամը մուտքագրվել է թյուրիմացաբար, այն մեխանիկական սխալի արդյունք է, հետևապես սխալմամբ մուտքագրված գումարը, ըստ էության, չի կարող հիմք հանդիսանալ վերոգրյալ գումարը Ա/Ձ Սերգեյ Կարապետյանի իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ ներառելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ա/Ձ Սերգեյ Կարապետյանի դիմումը՝ սխալմամբ ՀԴՄ մուտքագրված գումարն իրացման շրջանառությունից նվազեցնելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ